

ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏԵՐՈՒՄ
ՎԱՃԱՌՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՉԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Շրջիկ առևտրի կետում չի թույլատրվում վաճառել՝

- գյուղատնտեսական արտադրանք,
- մսամթերք,
- ծովամթերք,
- կաթնամթերք,
- կենդանիներ
- դեղեր և բժշկական նշանակության արտադրանք,
- շինանյութ,
- ավտոպահեստամասեր,
- հրավառության կամ հրագործական արտադրանք,
- պարֆյուներիա-կոսմետիկական ապրանքներ
- կենցաղային և համակարգչային տեխնիկա,
- աուդիո և վիդեո արտադրանք,
- կենդանիների խնամքի համար նախատեսված իրեր,
- որսորդական պարագաներ,
- տնտեսական ապրանքներ և գրենական պիտույքներ,
- պահպանակներ, միջադիրներ և հիգիենիայի այլ պարագաներ,
- ծխախոտի արտադրանք,
- թունդ ոգելից խմիչքներ,
- հեղուկ վառելիք, հեղուկացված նավթային գազ, տեխնիկական հեղուկներ,
- մանկական կերեր,
- այլ ապրանքներ, որոնց իրացումն արգելված կամ սահմանափակված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Շրջիկ առևտրի կետերում չի թույլատրվում մատուցել՝

- վարսահարդարման և դիմահարդարման ծառայություններ,
- ինտերնետ ծառայություններ,
- բանկային կամ արտարժույթային ծառայություններ,
- կապի և հեռահաղորդակցման ծառայություններ,
- բժշկական ծառայություններ,
- կացարանի տրամադրում և այլ հյուրանոցային ծառայություններ,
- ցանկացած տեսակի մերսման ծառայություններ: